# ՄԵՐ ԵՐՋԱՆԻԿ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

(Նվիրում եմ Սովետական Հայաստանի 24-րդ տարեդարձին)

*Մեր հոյակապ, լուսածիծաղ այս երկրում,*
*Ուր Հայ միտքը, Հայ պատմությունն է ապրում,*
*Ամենայն ժամ հավերժությունն եմ տեսնում*
*Մեր այսօրվա լուսածփուն ընթացքում:*

*Ես տեսնում եմ մեր անցյալն ու պատմությունն*
*Կյանքի լույսով և պայքարով աճեցուն,*
*Ուր փառքն ու սերն համընթաց են ընթանում*
*Հաղթանակի աշխարհածավալ թռիչքում:*

*Եվ ապրում է ժողովուրդն իմ այս դարում*
*Իր ներկայով, իր անցյալով իմաստուն,*
*Ու տեր դարձած իր աշխարհին, իր բախտին*
*Իր նոր փառքի տաճարներն են կառուցում:*

*Եվ արդ հիմա, Սովետների մեր երկրում*
*Ազատասեր մեր ժողովուրդն եմ տեսնում,*
*Նոյեմբերի փարոսն առած իր ճամբին*
*Իր պայքարի հաղթանակն է նա տոնում:*

**Ռուբեն վարդապետ**